




Մ Ա Ս Ե Ա Յ Ա Ղ Ա Ի Ն Ի

Ա Ի Ե Տ Ա Բ Ե Ր

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

ԱԶԳԱՅԻՆՔ, ԲԱՐՈՅԱԿԱՆՔ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԱՌԱՔԻՆԻՈՅՆ ՈՒՐՈՒԱԳԻԾԸ ⁽¹⁾

 ին ատենի փիլիսոփաները իրենց սո-
լորական խրատներէն մէկն ալ այս
ըրած էին թէ «Մարդս իւր մտած-
մունքն ու զգացմունքները կրթե-
լու համար՝ պէտք է ընտրէ ու աչքին առ-
ջեւը դնէ մեծ ու անուանի մարդ մը, եւ
նորա օրինակին հետեւի»։ Եւ յիշաւի, ինք-
զինքը կրթել ու կատարելագործել ուզողին
համար, կրնամք ըսել թէ քան զայս օգտա-
կար հնարք մը գտնելը դժուար է։ Գէշը ձրն
է. — մարդկային ընկերութեան մէջ այսպէս
օրինակի տեղ գրուելու մարդ մը գտնելը
գիւրքին բան չէ, եւ գրեթէ նոյնչափ եւս
դժուար բան է գտնէ մտքով նորա մէկ ու-
րուագիծը նկարագրելը։ Ամէն մարդ կ'ա-
հանջէ որ իրեն օրինակ ընտրելու մարդը

այնպիսի ընաւորութիւն ու յատկութիւններ
ունենայ որ յարմար լինին իւր վիճակին, իւր
կապակցութիւններուն, իւր կարողութեանն
ու իւր ախորժակին։ — Այն մարդն որ մի-
ջակ կամ չափաւոր կատարելութեանց տէր
է, ու գերազանց բաներու ետեւէ կիշնայ,
եսովցոսի առակին մէջ պատմուած ագռա-
ւուն փորձանքին կրնայ հանդիպիլ, որ արծի-
ւին ոչխար վերցընելը տեսնելով՝ ինքն ալ
կուզէ անոր նմանիլ, կիջնայ ոչխարի մը վը-
րայ, կը պաշտօնէ կմնայ անոր բուրդերուն
մէջ ու հովիւներուն ձեռքը կիշնայ։ — Բայց
այս յանգանութեան օրինակը աւելի խելքի
ու փառքի ետեւէ ընկնողներուն համար է՝

(1) Թարգմանութիւն ի գաղղիականէ։

քան թէ բարոյական կատարելութեան ետեւէ ընկնողներուն համար. վասն զի սոցա բռնած ճամբուն մէջ՝ միայն ջանք ընեն ալ գոյութեան արժանի գործ է, եւ մէկ քայլ մը միայն աւելի առնելը՝ անարգութենէն մէկ աստիճան մը վեր բարձրանալ է:

Կատարեալ օրինակ կամ գաղափար մը ձեւացընելու համար, հարկ պիտի լինէր փիլիսոփայութեան ամէն խրատները մէկտեղ բերել: Բայց մեք այնպիսի ուրուագիծ մը հանեմք որ կարենայ իսկական կենդանագիր՝ այսինքն կենդանի մարդու մը կերպարանք ըսուիլ, — թէպէտ եւ զանազան մարդկանց կատարելութիւնները մէկ անձի մը վրայ բերուին, — եւ այնպէս հետեւելու արժանի օրինակ մը ձեւանայ:

Այս մեր մտքով ձեւացուցած անձը՝ դրսէն մէկ կարգէ դուրս աչքի զարնող բան մը չունի. պարզ, անխռով, զուարթ ու անկեղծ է, աւելի կտրիճ՝ քան թէ գեղեցիկ, աւելի հանդարտ՝ քան թէ կրակոտ, աւելի ծանր՝ քան թէ ուրախ, աւելի մարդավար՝ քան թէ բարակ քաղաքավար: Ոչ պարզ է եւ ոչ շփոթական, այլ ուշադիր, կամակատար, խորհրդապահ: Կեցուածքը ոչ խեղճուկ է եւ ոչ գոռոզ, այլ անշփոթ ու անվախ: Նորա բնական մարդավարութենէն կտեսնուի որ ինքը գրքէն երեւցուցածէն ալ աւելի ազնուաբարոյ է. նորա քաղաքավարութիւնը ոչ այնչափ կոտորուածքներու վրայ է, որչափ ուրիշի սիրտը վատարկելու ջանքին վրայ. ոչ այնչափ լեզու թափելով է՝ որչափ գործով ու վարմունքով. ոչ այնչափ մանր մունր բաներու վրայ է, որչափ փափուկ մտադրութիւններու վրայ: Ընդունելի եղած սովորութեան դէմ արհամարհանք չցուցնէր, բայց իւր պատիւը սովորութեան սիրոյն համար չցածցնէր: Փռւճ ու մռճ բաներու համար ինքզինքը նեղել չսիրէր, բայց ուրիշներուն ալ այնպիսի նեղութիւններ տալէն կքաշուի. եւ թէ որ մէկը սովորութեան դէմ բան մը ընէ, ինքը ամենեւին անով չառնուիր: Իրեն հագուստն ալ անձին հետ համեմատ է. անպաճոյճ, կոկիկ ու մաքուր. այնպէս որ ընկերական մարդը նորա վրայ ընտիր ճաշակ կգրանէ, սոսկական մարդը նորա վրայ զարգասիրութիւն չգրանէր, եւ խեղացի մարդը կտեսնէ որ նա նորաձեւութեան (մօտայի) գերի մարդ չէ: — Ծարժմունքներուն ու նայուածքին տէրը լինելով, ամէն ըսած խօսքին

ամէն ըրած բանին մէջ ծանր ու ազնուական կերպ մը ունի, աշխարհէ հասկընալ մը, համեստ համարձակութիւն մը, եւ իրմէ վար մարդկանց մեղադրանքներուն դիմացը՝ արիական անզգայութիւն մը:

Մէկուն մէկալին հետ ճանչւորութիւն ընելու մեծ փափաք մը չունենալով, երբ մէկուն հետ նոր պիտի սկսի ճանչւորիլ՝ նորա բնութիւնը առաջ լաւ մը դիտել հասկընալ կտրէ: Գիտէ թէ ինչպէս լուռ պիտի կենայ՝ երբ կտեսնէ որ դիմացինին խելքը միտքը իրենին նման չէ, կամ թէ երբ որ ախորժ մը կիմանայ նորա խօսակցութենէն: Նորա խօսքերուն ու շարժմունքներուն մէջ ոչ անհամբերութիւն կտեսնես եւ ոչ անհանգստութիւն, վասն զի անոնք ամէնն ալ անմեղ ու զուարթ հոգիէ մը կբխին: Անկեղծութիւնը, արդարութիւնը, բարեսրտութիւնը անզգալի կերպով կխառնուին նորա ամէն խօսքերուն մէջ, ու հետը շատ անգամ տեսնուողներուն հոգւոյն մէջ ալ կանցնին: Նորա խօսակցութիւնը մերթ ուրախ զուարթ է եւ մերթ ծանր, մերթ թեթեւ ու մերթ խորունկ, մերթ անորոշ եւ մերթ վսեմ. պրտոյտ ճամբաներով օգտակար բաներու վրայ կգառնայ, բայց զուարճալի նիւթերն ալ բռնորովին գուրս չձրգեր: — Ոճը կամ խօսակցութեան կերպը քիչ մը անհոգութեամբ խառնուած լինելով, թէպէտ եւ ամենաճշմարիտ, յայտնի կցուցնէ որ նորա բոլոր ուշադրութիւնը աւելի անո՞ր վրայ է թէ ինչ է ըսածը՝ քան թէ անոր՝ թէ ինչ կերպով է խօսածը: — Ինքը ուրիշներուն օրինակ տալու համար եղած է, եւ սակայն կարծես թէ ուրիշներէն օրինակ կառնու. եւ սովորաբար՝ նա աւելի ջանք կցուցնէ իւր դիտութիւնը ծածկելու՝ քան զանոնք որ կաշխատին իրենց գիտութիւնը ամենուն առջեւը բանալու. ուստի լաւ կհամարի հասարակ կերպով անշուք ու խաղաղաւէտ կեանք անցընող մարդ մը լինել՝ քան թէ ուրիշներէն վեր լինիմ ըսելով՝ խռովութեամբ լի կեանք մը անցընել:

Երբ որ նա այնպիսի ընկերութեան մը մէջ երեւնայ՝ ուր որ ճանչցուած չէ, հոն դրոշմուողներուն շատը կգրնեն մտքերնին թէ բաւական բարեսիրտ մարդ մի է, եւ թէպէտ պարզ կերպ մը ունի՝ բայց բան մը կայ վրան որ սովորական չէ, ինչ եղածը իրենք ալ չեն հասկընար՝ բայց կպատկառնին անկէջ: Իրենք զիրենք խեղացի տեղ դնողները՝ նորա վրայ մեծ խելք մը չեն տեսներ, բայց

այս ալ կիմանան որ նա քան զիրենք խելացի է. չարասիրտը, թեթեւամիտը, ինքնահաւանը, նորա աչքին մէջ նայած ատենները այնպիսի անհանդատութիւն մը տալիս է մը կողմէն, որ ինչէն եղածը իրենք ալ չեն գիտեր. բարեսիրտն ու գոթալիքը բնական կերպով մը դէպ ի անոր կը աշուին. կարծես թէ նա իրենց ոյժ մը կուտայ, սիրտ կուտայ. գիտուն մարդը կարթննայ անոր քանի մը այնպիսի խօսքերէն՝ որ հասարակ ժողովրդեան համար նշանակութիւն մը չունին. մըտիկ կընէ, սիրտը կ'առուի, ու կ'ընայ նորա աչքը մտնել. կամ թէ լռութեամբ մըտիկ կընելով նորա խօսակցութեանը, կտեսնէ որ հասարակ կերպարանքի մը ու պարզ դրուցուածքի մը ներքեւ բարեսիրտութիւն, խորունկ մտածութիւն, քաջասրտութիւն ու անցեալ գոթալիքութիւններ կերեւնան:

Ծաղրածութենէ չվախնար ամենեւին. ինքն ալ խիստ քիչ անգամ կ'ընենք զայն, այսինքն միայն այն ատենն որ հարկ համարի ցուցնել թէ ինքն ալ գիտէ գիմացինին դէմ նոյն զէնքը բանեցնել: Գովասանքով չուռիր, մեղադրանքէ չառնուիր: Իւր պակասութիւնները չճածկելովը՝ կ'ընենք զանոնք. երկար ատեն պակասութեան մը մէջ մնալ չկրնար. շուտով իրեն բուն բնաւորութեանը կ'առնայ, եւ քիչ մը ինքզինքը ժողովրդեւուն պէս՝ իւր տկարութեան պակասութիւնները կ'մոռցնէ: «Յիմարութիւն մի էր՝ ըրի. այս բանը ինձի շատ անգամ պատահած է» խօսքերը շատ կսիրէ բանեցնել: Պարսաւ լսելէն կ'վախնայ. բայց երբոր իւր պարտքերը պիտի կատարէ՝ պարսաւը բանի տեղ չգընէր. մանաւանդ թէ անկից օգուտ քաղել ալ գիտէ. իրեն համար առիթ մըն է այն՝ իւր պակասութիւնները ճանչնալու, եւ անոնց վրայ այնպիսի անկողմնասիրութեամբ կ'խօսի որ իւր թէ ուրիշի վրայ լինէր խօսքը: Կարծես թէ նորա խելքը՝ ինքիւրմէն գերադանց լինելով՝ կ'մեղադրէ զնա ու կ'ընդհատ վրան, կ'ցաւի ալ որ իւր բնիկ անկատարութեամբը չկրնար ուղած աստի-

ճանին հասնիլ: — Բամբասանքի ատեն աչքը չորս է որ ինքը բամբասողներէն չլինի. եւ միայն բարի մտքով գէշ կ'խօսի երբեմն ուրիշներուն վրայ, այսինքն երբ որ հարկաւոր է մէկուն խարդախութիւնը դուրս հանել, մէկուն անիրաւութիւնը խայտառակել, կամ թէ տկարին պաշտպանութիւնը ընել. այնչափ փափկասիրտ ու զգուշաւոր է որ աւելի կը քաշուի հեռու եղող մարդուն վրայ գէշ խօսելէն՝ քան թէ մօտ գտնուողէն. վասն զի գիտէ որ մօտինը կարող է ինքզինքը պաշտպանել: Իւր թշնամեացը վրայ խօսած ատենը, նոցա աղէկութիւնները այնպիսի անտարբերութեամբ կ'զուլէ որ իւր թէ նոցա դէմ ամենեւին գանգատ մը չունենան:

Հակաճառութենէ կ'ուրէ կ'ախչի. իւր կարծիքները կ'զրուցէ առանց կ'ձեւու. միայն անոր համար գիմացինին առարկութիւն կընէ որ կ'սմբան սովորի, կամ խօսակցութեան հոգի տայ. եւ շատ անգամ կտեսնես որ կարծիքներուն խիստ տաք կերպով իրարու դէմ եկած միջոցին եւս պարտութիւն կ'ստատուին ու բերնէն այս խօսքը կ'հանէ գեղեցիկ վեհանձնութեամբ թէ «Այս պատճառաբանութիւնը իմինէս իրաւացի է». գիմացինին խօսքերը ինքն ալ կ'հաստատէ նոր նոր ապացոյցներով, ու մտիկ ընողներուն ալ կ'հասկըցնէ որ կամ բաւական տեղեկութիւն չունենալով այն խնդրոյն, եւ կամ իւր վրայ մեծ համարմունք ունենալով՝ չէին կրցած խնդիրը ինչպէս որ պէտք է հասկընալ: Նորա ըրած յաղթութիւններն եւս շատ ազնիւ կերպ մը ունին. կ'վախնայ որ իւր յաղթութենէն ուրիշին սիրտը չկտորի. նորա ուղածն է բան սովորեցնել, ոչ թէ սիրտ ծակել. նա ճշմարտութեան ծառայութիւն մը կուզէ ընել, ոչ թէ իւր հպարտութեանը յաղթանակ մը կանգնել: — Յամառութեան ու գոռոզութեան դէմ՝ նորա բանեցուցած մեծ զէնքն է՝ շուտ մը խոնարհիլ ու տեղի տալ: «Ես շատ անգամ կ'ընալիմ, կ'ըսէ. շատ կարելի է որ այս բանիս մէջ ալ իմ կարծիքս սխալ լինի . . . »

(Շարայարութիւնն յառաջիկայս.)

